«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի տնօրենի
ժամանակավոր պաշտոնակատար,
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

Մ.Գ.Մանուչարյան
25 ապրիլի 2023թ.

ԿԱՐԾԻՔ
ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Գառնիկ Աշոտի Գևորգյանի «Պետության տնտեսական ինքնիշխանության կառավարչական հիմնախնդիրները ՀՀ նյութերով» թեմայով ատենախոսության վերաբերյալ, ներկայացված Ը.00.02. – «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Մասնակցում էին՝ Մերի Մանուչարյան՝ *տնտեսագիտության թեկնածու*, Եվգենյա Հակոբյան՝ *տնտեսագիտ. թեկնածու*, Ռոբերտ Սարինյան՝ *տնտեսագիտ. դոկտոր, պրոֆ.*, Աշոտ Մարկոսյան՝ *տնտեսագիտության դոկտոր, պրոֆ.*, Բելլա Գաբրիելյան՝ *տնտեսագիտ. թեկնածու*, Գրիգոր Մանուկյան՝ *տնտեսագիտ. թեկնածու*, Գևորգ Հարությունյան՝ *տնտեսագիտ. թեկնածու*, Տաթևիկ Փարսադանյան՝ *տնտեսագիտ. թեկնածու*, Շողեր Պողոսյան՝ *տնտեսագիտ. թեկնածու*, Ստեփան Պապիկյան՝ *տեխնիկ.գիտ.թեկնածու*:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ժամանակակից պայմաններում աշխարհի գրեթե բոլոր պետությունները բախվում են տնտեսական ինքնիշխանության հետ կապված հիմնախնդիրների: Գործնականում ամբողջապես պետությունները գտնվում են այլ երկրներից, միջազգային ֆինանսական կազմակերպություններից, վերազգային կապիտալից ու վերպետական կառույցներին մշտական կախվածության պայմաններում: Այս իրավիճակն առավելապես պայմանավորված է վերջին տասնամյակներում համաշխարհային տնտեսության մեջ

աճող դերակատարում ստացած ինտեգրացիոն ու գլոբալիզացիոն գործընթացներով, ինչի արդյունքում գրեթե բոլոր պետությունները ստիպված են առնվազն մասնակիորեն զիջել իրենց տնտեսական ինքնիշխանությունը՝ համաշխարհային բարիքի ստեղծման գործընթացի մաս կազմելու, իրենց տնտեսությունների և որպես հետևանք՝ հասարակությունների համար առավել նպաստավոր պայմաններ ստանալու նպատակով: Նկարագրված գործընթացների զուգահեռ՝ աշխարհի շատ պետություններ,, հատկապես արգացող երկրները շարունակում են գտնվել միջազգային ֆինանսական կազմակերպություններից (Առևտրի համաշխարհային կազմակերպություն, Արժույթի միջազգային հիմնադրամ, Համաշխարհային բանկ) ֆինանսական և ինստիտուցիոնալ կախվածության պայմաններում, ինչն անխուսափելիորեն հանգեցնում է տնտեսական ինքնիշխանության նվազմանը: Բազմաթիվ պետություններ, համաշխարհային տնտեսական գործընթացներից չմեկուսանալու, տնտեսական բարենպաստ պայմաններ ստանալու նպատակով, ինչպես նաև քաղաքական գործոններով պայմանավորված՝ անդամակցում են վերպետական տնտեսական միավորներին՝ կամավոր կերպով զիջելով տնտեսական ինքնիշխանության որոշակի հատվածը: Ատենախոսության շրջանակներում անդրադարձ է կատարվել նշված բոլոր գործոնների ուսումնասիրմանը, քանի որ դրանք տարբեր համամասնություններով առկա են Հայաստանի Հանրապետությունում, որի համար տնտեսական ինքնիշխանության հիմնախնդիրը ունի ինչպես ընթացիկ կառավարչական, այնպես էլ երկարաժամկետ՝ ռազմավարական նշանակություն:

Ատենախոսության շրջանակներում ուսումնասիրությունները հիմնականում կատարվել են տնտեսության այն ոլորտներում, որոնք ուսումնասիրության դիտանկյունից առավել մեծ չափով են վտանգում տնտեսական ինքնիշխանությունը: Ատենախոսությունը նվիրված է Հայաստանի Հանրապետությունում տնտեսական ինքնիշխանության պաշտպանության, դրան ուղղված սպառնալիքների հաղթահարման ուղղությունների մշակմանը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հետազոտության նպատակն է գնահատել ՀՀ տնտեսական ինքնիշխանության վրա ազդող հիմնական գործոնները և առաջարկել տնտեսական ինքիշխանության մակարդակի բարձրացման ուղիներ: Տվյալ նպատակին հասնելու համար սահմանվել են հետևյալ խնդիրները՝

- Ուսումնասիրել «տնտեսական ինքնիշխանություն» հասկացության՝ գիտական գրականության շրջանակներում ներկայացված տեսություններն ու

մոտեցումները, ինչպես նաև տնտեսական ինքնիշխանության վրա ազդող հիմնական գործոնները,

- սահմանել և հետազոտել Հայաստանի Հանրապետության տնտեսական ինքնիշխանության վրա ազդող հիմնական գործոնները,
- վերլուծել Հայաստանի Հանրապետության տնտեսական ինքնիշխանության անբարենպաստ գործոնները և առաջարկել դրանց լուծման խոցելիության նվազեցման լուծումներ,
- գնահատել տնտեսական ինքնիշխանության պաշտպանության գործընթացում ՀՀ-ի թույլ և ուժեղ կողմերը,
- ներկայացնել Հայաստանի Հանրապետության տնտեսական ինքնիշխանության պաշտպանությանն ու դրա մակարդակի բարձրացմանն ուղղված առաջարկություններ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒԹԸ

Հետազոտության ընթացքում իրականացված վերլուծությունների հիման վրա ստացվել են տեսական, մեթոդական և կիրառական բովանդակության գիտական արդյունքներ, որոնցից գիտական նորույթ հանդիսացողները հետևյալներն են.

- Առաջարկվում է «տնտեսական ինքնիշխանության» նոր սահմանում՝ հիմնված հասկացության ներքին և արտաքին բաղադրիչների բաժանման վրա: Ըստ այդմ, տնտեսական ինքնիշխանությունը պետական իշխանության կարողությունների ամբողջությունն է տնտեսական աճի վերաբերյալ կայացնելու ինքնուրույն, անկախ որոշումներ՝ ազգային տնտեսության մեջ հարաբերականորեն մեծ մասնաբաժին ունեցող խոշոր կապիտալի գործունեության, միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ հարաբերությունների, վերպետական կառույցներին անդամակցության և վերազգային կապիտալի՝ ազգային տնտեսության մեջ ներկայացվածության պայմաններում՝ առանց վերջինների կողմից սուվերենությանը սպառնացող ազդեցության:
- Մշակվել է տնտեսական ինքնիշխանության գնահատման և կառավարելիության գործակիցների հաշվարկման մեթոդաբանություն՝ համապատասխան ցուցանիշների համակարգի հիման վրա:
- Ազգային տնտեսությունում կատարված օտարերկրյա ուղղակի ներդրումների կառուցվածքի կենտրոնացվածության, ՀՀ-ում «մեկ երկրից կախվածության» համախատնիշի հաղթահարման նպատակով առաջարկվում է, որ տնտեսական ինքիշխանության պաշտպանության ու դրա մակարդակի բարձրացմանն ուղղված

պետական քաղաքականության հիմքում դրվի օտարերկրյա ուղղակի ներդրումների բազմատեսակացման սկզբունքը:

▪ Առաջարկվում է ընդունել «Հայաստանի Հանրապետության տնտեսական ինքնիշխանության պաշտպանության հայեցակարգ»՝ ներառելով հարաբերականորեն չափելի ցուցանիշներ (այդ թվում՝ ՏԻԿ և ՏԻԳ գործակիցները), որոնց գերազանցումը կծառայի որպես տնտեսական քաղաքականության վերափոխման անհրաժեշտության ահազանգ: «Հայաստանի Հանրապետության տնտեսական ինքնիշխանության պաշտպանության հայեցակարգի» շրջանակներում առաջարկվում է սահմանադրական անկախ մարմնի՝ Տնտեսական ինքնիշխանության պաշտպանության հանձնաժողովի ստեղծումը, որը կզբաղվի տնտեսական ինքնիշխանության պաշտպանության և ամրապնդման պետական քաղաքականության մշակմամբ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության ներածության մեջ հիմնավորվել է հետազոտվող թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակներն ու խնդիրները, ուսումնասիրության օբյեկտը և առարկան, հետազոտության տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, ձևակերպվել են հետազոտության գիտական արդյունքները և նորույթները, դրանց տեսական և գործնական նշանակությունը, ինչպես նաև դրանց փորձարկումը և հրապարակումները:

Ատենախոսության առաջին՝ «Տնտեսական ինքնիշխանությունը՝ որպես կայուն տնտեսական զարգացման կարևոր գործոն» գլխում ներկայացվել են տնտեսական ինքիշխանության էությունը և հիմնական ասպեկտները, դրա վերափոխումները ժամանակակից պայմաններում, ինչպես նաև ներկայացվել է տնտեսական ինքնիշխանության չափանիշներն ու գնահատման մեթոդաբանությունը:

Ատենախոսության երկրորդ՝ «Տնտեսական ինքնիշխանության կառավարչատնտեսական հիմնախնդիրները և դրանք պայմանավորող գործոնները ՀՀ-ում» գլխում իրականացվել է ՀՀ տնտեսական ինքնիշխանության սոցիալ-տնտեսական նախադրյալների քանակական գնահատում, ՀՀ տնտեսական ինքնիշխանության ներքին և արտաքին սպառնալիքների համեմատական վերլուծություն, ինչպես նաև վեր են հանվել վերպետական ինտեգրացիոն միավորումների անդամակցության պայմաններում ՀՀ-ում տնտեսական ինքնիշխանության հիմնախնդիրները:

Ատենախոսության երրորդ՝ «ՀՀ տնտեսական ինքիշխանության մակարդակի կարգավորման կառավարչական մեթոդների կատարելագործման և տնտեսական ինքիշխանության ամրապնդման հիմնական գերակայությունները» գլխում ներկայացվել են տնտեսական ինքնիշխանության գնահատման և կառավարման գործակիցները, արտաքին տնտեսական հարաբերությունների դիվերսիֆիկացիան ներկայացվել է որպես տնտեսական ինքնիշխանության մակարդակի բարձրացման գրավական, մշակվել են Հայաստանի Հանրապետությունում տնտեսական ինքնիշխանության մակարդակի կարգավորման կառավարչական մեթոդների կատարելագործման ուղղություններ:

Հետազոտության արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս կատարելու եզրահանգումներ, որոնք ամփոփված են ատենախոսության «Եզրակացություններ» բաժնում:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ատենախոսությունն իր դրական արժանիքներով հանդերձ զերծ չէ նաև որոշակի թերություններից, որոնցից կարևորել ենք հետևյալները.

1. Տնտեսական ինքնիշխանությունը հասակացության բնութագրման հետ կապված տեսակետները սակավ են: Աշխատանքի գիտագործնական նշանակությունն էլ ավելի կբարձրանար, եթե ներկայացված լինեին թեմային առնչվող հայ հետազոտողների աշխատանքները ևս:
2. Ատենախոսության 1.3. «Տնտեսական ինքնիշխանության չափանիշները և գնահատման մեթոդաբանությունը» ենթագլխում հեղինակը նշում է, որ գրականության մեջ տնտեսական ինքնիշխանության գնահատման միասնական չափանիշներ չկան և տնտեսական ինքնիշխանության գնահատման մեթոդաբանությունը բավարար չափով ուսումնասիրված չէ: Այնուհետև նույն գլխում ներկայացված են որոշակի գործոնների մեկնաբանությունը, որոնք կարևոր են համարվում տնտեսական ինքնիշխանության չափորոշիչների և դրա մակարդակի գնահատման մեթոդաբանության տեսանկյունից: Սակայն մեթոդաբանությունների ուսումնասիրությունը սահմանափակվում է միայն ազդեցության լծակների մեթոդաբանության դիտարկմամբ, որը հետագայում ոչ մի կերպ չի ստանում իր զարգացումը աշխատանքում և չի օգտագործվում հեղինակի կողմից:
3. Աշխատանքի գիտագործնական նշանակությունն էլ ավելի կբարձրանար, եթե տնտեսական ինքնիշխանությունը գնահատվեր ԵԱՏՄ և ԵՄ շրջանակում, ներքին և արտաքին բաղադրիչներով: Հիմք ունենալով ատենախոսության

հեղինակի ամփոփումը, ցանկալի կլիներ, որ ներկայացված լինեին նաև համապատասխան առաջարկություններ, որոնք թույլ կտային գնահատել ԵԱՏՄ-ին Հայաստանի մասնակցության նպատակահարմարությունը հենց դիտարկվող համատեքստում:

4. Եզրակացությունների և առաջարկությունների շարքում ատենախոսության հեղինակը առաջարկում է Հայաստանի Հանրապետության տնտեսական ինքնիշխանության պաշտպանության հայեցակարգի ընդունումը, ինչպես նաև համապատասխան անկախ մարմնի՝ Տնտեսական ինքնիշխանության պաշտպանության հանձնաժողովի ստեղծումը: Այս առումով, մեր կարծիքով, պետք է նշել, որ տնտեսական ինքնիշխանության ապահովումը պայմանավորված է ոչ թե որոշակի մարմինների ստեղծմամբ, այլ պետության կողմից ընտրված տնտեսության մոդելով և դրա գործարկմամբ:
5. Աշխատանքում առկա են տեխնիկական բնույթի թերություններ, ինչպիսիք են, օրինակ՝ էջ 88-ում Գծապատկեր 10-ի փոխարեն հղում պետք է կատարվեր Գծապատկեր 13-ին, մտքեր, որոնց մասով հղումները բացակայում են՝ օրինակ էջ 40, և այլն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Գառնիկ Աշոտի Գևորգյանի «Պետության տնտեսական ինքնիշխանության կառավարչական հիմնախնդիրները ՀՀ նյութերով» թեմայով ատենախոսությունը ներկայանում է որպես ամբողջական, ավարտուն և օգտակար հետազոտություն, որում վեր են հանվել ՀՀ-ում տնտեսական ինքնիշխանության հիմնախնդիրները և մշակվել են Հայաստանի Հանրապետությունում տնտեսական ինքնիշխանության մակարդակի կարգավորման կառավարչական մեթոդների կատարելագործման ուղղություններ: Աշխատանքում տեղ գտած թերությունները էապես չեն ազդում աշխատանքի գիտական արժեքի վրա:

Հեղինակի գիտագործնական ընդհանրացումները, եզրակացությունները և առաջարկները նոր խոսք են և շոշափելի ներդրում կարող են ունենալ տնտեսական ինքնիշխանության պաշտպանության ու ամրապնդման քաղաքականության մշակման և իրացման գործընթացներում:

Թեկնածուական ատենախոսության սեղմագիրն արտացոլում է հետազոտության հիմնական բովանդակությունը, արդյունքները և գիտական նորույթը: Հեղինակի կողմից հրապարակած 7 գիտական հոդվածները համապատասխանում են հետազոտության ուղղվածությանը, դրա խնդիրներին և ունեն բավարար ընդգրկունություն:

Այսպիսով՝ Գառնիկ Աշոտի Գևորգյանի «Պետության տնտեսական ինքնիշխանության կառավարչական հիմնախնդիրները ՀՀ նյութերով» թեմայով ատենախոսության և դրան համատեղ կազմված սեղմագիրն ու թվով 7 հոդվածների հրապարակումները համապատասխանում են ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 6-րդ և 7-րդ կետերին, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող ՀՀ ԲՈԿ-ի պահանջներին, իսկ աշխատանքի հեղինակն արժանի է Ը.00.02. – «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտության գծով տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Ատենախոսությունը քննարկվել է ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի՝ որպես առաջատար կազմակերպության, «Ատենախոսությունների քննարկման և կարծիքների ներկայացման» հանձնաժողովի նիստում (25.04.2023թ., արձանագրություն թիվ 4):

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ
գիտաշխատող,
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Է.Մաթևոսյան**

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ ավագ
գիտաշխատող,
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Գ.Մանուկյան**

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի ՏԻ գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Է.Մաթևոսյանի և նույն ինստիտուտի ավագ գիտաշխատող տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Գ.Մանուկյանի ստորագրությունների իսկությունը «հաստատում եմ»՝

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ գիտ. քարտուղար,
տնտեսագիտության թեկնածու, **Ե.Ա.Հակոբյան**
«25» ապրիլի, 2023թ.

Կ. Տ.